

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՈՒ ՄԻՏՈՒՄ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՈՐԻՍՏԻ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն)

### ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Համաբանությունը մարդկային մտածողության հիմնական տիպերից մեկն է, որն ընկած է կարգադասման (categorization) ճանաչողական գործընթացի հիմքում<sup>1</sup>: Իսկ համաբանական-ձևաբանական փոփոխությունները ոչ այլ ինչ են, քան լեզվական երևույթների մտածական արտացոլումների կարգադասման մեջ կատարվող տեղաշարժեր<sup>2</sup>: Ընդ որում՝ հին ձևի համաբանական փոխարինումը նորով սովորաբար կատարվում է աստիճանաբար և անցնում զուգաձևության միջակա փուլ, այսինքն՝ հին և նոր ձևերը մի որոշ ժամանակ գոյակցում են կողք կողքի<sup>3</sup>: Առանձնացվում է համաբանական-ձևաբանական փոփոխության երկու հիմնական տիպ՝ համահարթեցում և ընդլայնում: Առաջինի դեպքում հարացույցի ներսում հիմքային տարբերակայնությունը վերանում է, իսկ երկրորդի ժամանակ տվյալ քերականական օրինաչափությունը տարածվում է սկզբնապես այլ օրինաչափությունների պատկանող ձևերի վրա<sup>4</sup>:

Հայտնի է նաև, որ կիրառահաճախականությունը (the frequency of use) լեզվական համաժամանակյա օրինաչափությունների և տարաժամանակյա փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը պայմանավորող չափազանց կարևոր գործոն է<sup>5</sup>:

Համաբանական-ձևաբանական փոփոխությունների ուղղվածության հարցում կարևոր դեր է խաղում նաև այն հանգամանքը, թե խոստողների գիտակցության մեջ քերականական ձևերը ինչպես են վերլուծության ենթարկվում, և նրանք ինչպես են ըմբռնում հարացույցի անդամների ձևաբանական փոխհարաբերությունը<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **J. Bybee, C. Beckner**, Language use, cognitive processes and linguistic change, In: **C. Bowern, B. Evans** (eds.), The Routledge Handbook of Historical Linguistics, London and New York, 2015, էջ 505-507:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 506-507:

<sup>3</sup> Տե՛ս **J. Bybee**, Diachronic linguistics, In: **D. Geeraerts and H. Cuycckens** (eds.), The Oxford Handbook of Cognitive Linguistics, Oxford University Press, 2007, Ch. 36, էջ 958-959, նաև **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 207:

<sup>4</sup> Տե՛ս **J. Bybee**, Diachronic linguistics..., էջ 958-964:

<sup>5</sup> Հմմտ. **Մ. Ավետյան**, Արդի հայերենի ընթացիկ փոփոխություններից մեկը կիրառահեն լեզվաբանության լույսի ներքո // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, Եր., 2019, № 2 (29), էջ 48-56:

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ, **J. Bybee**, Frequency of Use and the Organization of Language, Oxford, 2007, Ch. 3, էջ 41-69:

Սույն հոդվածում համաժամանակյա և տարաժամանակյա քննության է ենթարկվում արդի արևելահայերենի *է* խոնարհման պարզ բայերի, պատճառական բայերի և մի խումբ անկանոն բայերի աորիստի (անցյալ կատարյալի) ձևերի համաբանական փոփոխությունների երկու միտում, որոնցից առաջինը դրսևորվում է նախկին արմատական և ընթացական հիմքերի ցոյականացման (*տվի/տվեցի, բերի/բերեցի, հեռացրի/հեռացրեցի*), իսկ երկրորդը՝ սկզբնական ցոյական հիմքերի ապացոյականացման տեսքով: Վերջին դեպքում անանցողական (չեզոք, կրավորական և կրավորակերպ չեզոք) բայերը ներգործաձև խոնարհումը կրավորաձև խոնարհմամբ փոխարինելու միտում են ցուցաբերում. հմմտ. *գրի*՝ փխ. *գրեցի, ուղարկինք*՝ փխ. *ուղարկեցինք*, մյուս կողմից՝ *նստա*՝ փխ. *նստեցի, հոգնա*՝ փխ. *հոգնեցի, ընդունվալ*՝ փխ. *ընդունվեց, գժվալ*՝ փխ. *գժվեց* և այլն: Ի դեպ, նախկին ցոյական հիմքերի ապացոյականացման գործընթացը բնորոշ է խոսակցական լեզվին<sup>7</sup>, մինչդեռ անկանոն բայերի աորիստի արմատական ձևերի ցոյականացման միտումը գործում է գրական լեզվում: Արդ, *բերի/բերեցի, արի/արեցի, դրի/դրեցի, թողի/թողեցի, տվի/տվեցի, զարկի/զարկեցի* արմատական/ցոյական գուգաձևերից գրական լեզվի կանոնիկ ձևեր են ցոյական տարբերակները, իսկ արմատական ձևերը բնորոշ են խոսակցական լեզվին<sup>8</sup>: Ինչ վերաբերում է պատճառական բայերի *րեական/ցոյական* գուգաձևերին, կանոնիկ են ընթացական տարբերակները (*հեռացրի, բարձրացրի*), իսկ դրանց ցոյական ձևերը (*հեռացրեցի, բարձրացրեցի*) համարվում են գրական լեզվում չընդունված, սխալ ձևեր<sup>9</sup> կամ էլ կեղծ գրական ձևեր<sup>10</sup>, որոնց կիրառությունը թելադրված է «կարծեցյալ կանոնը պահելու ճիգով»<sup>11</sup>: Բայց, մեր կարծիքով, «կեղծ գրական ձևեր» և «կարծեցյալ կանոնը պահելու ճիգով» բնորոշումները թյուրըմբռնման տեղիք են տալիս տպավորություն ստեղծելով, թե իբր պատճառական բայերի ցոյական ձևերը ընթացական հիմքով ձևերի անհարկի «կեղծ գրականացման» արդյունք են: Մինչդեռ հայերեն բարբառների տվյալները, ինչպես ստորև կտեսնենք, ակնհայտորեն դրա դեմ են խոսում:

Պատճառական բայերի աորիստի ընթացական հիմքը (որն առաջացել

<sup>7</sup> Տե՛ս **Լ. Թեյան**, Բայի քերականական ձևերի կազմության և կիրառության որոշ առանձնահատկություններ արդի խոսակցական հայերենում // Ջահուկյանական ընթերցումներ-2009, Եր., 2009, էջ 70, նաև՝ **Չ. Աղաջանյան**, Ձևաբանական նոր և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 286, 288:

<sup>8</sup> Տե՛ս **Յու. Ավետիսյան**, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Եր., 2011, էջ 57-59՝ աղյուսակներով հանդերձ, **Յու. Ավետիսյան, Լ. Թեյան, Լ. Սարգսյան, Լ. Ավետիսյան**, Ուղեցույց հայոց լեզվի, գիրք Ա, Եր., 2017, էջ 191, **Ա. Աբաջյան**, Տեղաշարժեր արդի հայերենի անկանոն բայերի համակարգում // Կրթությունը և գիտությունը Արցախում, հուլիս-դեկտեմբեր, 2014, 3-4, էջ 59-60:

<sup>9</sup> Տե՛ս **Մ. Աբեղեան**, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 109, **նույնի** Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 331:

<sup>10</sup> Տե՛ս **Յու. Ավետիսյան, Լ. Թեյան, Լ. Սարգսյան, Լ. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 188, **Չ. Աղաջանյան**, նշվ. աշխ., էջ 287-288:

<sup>11</sup> **Լ. Թեյան**, նշվ. աշխ., էջ 69-70:

է մի խումբ բայերի եզակի հրամայականի ձևի և աորիստի հիմքի ձևաբանական հարաբերակցության համաբանությամբ, ինչպես՝ եզ. հրմ. **թո՛ղ, բե՛ր**, աոր. **թող-ի, բեր-ի**, և, ըստ այդմ, եզ. հրմ. **հեռացո՛ւր**, աոր. **\*հեռացուր-ի > հեռացր-ի**<sup>12</sup> աշխարհաբարում եզ. 3-րդ դ. ձևում սկզբնապես հանդես էր բերում *ուց* վերջավորություն (< գրբ. *ոյց* հիմքակազմածանցից վերախմաստավորմամբ): Ի դեպ, Յ. Շրյոդերի «Արամեան լեզուին գանձ» աշխատության մեջ «քաղաքացիական հայերենի» (այն է՝ ժամանակի արևելահայ աշխարհաբարի) քերականական ուրվագծում պատճառական բայերի աոր. եզ. 3-րդ դ. համար նշվում է դեռևս միայն *ուց* վերջավորությունը (ավանդական *ոյց* գրությամբ<sup>13</sup>)՝ գրաբարատիպ ցոյական և նոր՝ բեական հիմքով գուգաձև խոնարհմամբ, օր.՝ աոր. եզ. 1-ին դ. *մեծացուց-ի/մեծացր-ի*, եզ. 3-րդ դ. *մեծաց-ոյց/մեծացր-ոյց*, հոգ. 1-ին դ. *մեծացուց-ինք/մեծացր-ինք*<sup>14</sup>: Մինչդեռ 19-րդ դ. 60-70-ական թթ. Ս. Պալասանյանը որպես հիմնական ձև տալիս է *եց* վերջավորությամբ ձևը (*հագցրեց*), իսկ *ուց* վերջավորությամբ տարբերակը (*հագցրուց*) իբրև ոչ հիմնական գուգաձև նշվում է փակագծում<sup>15</sup>: Իսկ ահա Մ. Աբեղյանը 20-րդ դ. սկզբներին տալիս է միայն *եց* վերջավորությամբ ձևը (*գարմացրեց, փախցրեց*)<sup>16</sup>: Հետևաբար *ուց* վերջավորությամբ տարբերակը այդ ժամանակ արդեն կորցրել էր նույնիսկ ոչ հիմնական գուգաձևի կարգավիճակը և վերջնականապես դուրս մղվել գրական լեզվից:

Ակնհայտ է, որ պատճառական բայերի ցոյական հիմքը առաջացել է *է* լծորդության պարզ բայերի համաբանությամբ՝ եզ. 3-րդ դ. ընդհանուր ձևի հիման վրա (հմմտ. *հեռացր-եց* և *գր-եց*): Նախ աորիստի *եց* հիմքակազմածանցը վերախմաստավորվել է իբրև եզ. 3-րդ դ. վերջավորություն և որպես այդպիսին փոխանցվել նաև պատճառական բայերին, իսկ այնուհետև եզ. 3-րդ դ. *եց* վերջավորությամբ ձևի հիման վրա ցոյական ձևեր են առաջացել հարացույցի նաև մյուս դեմքերի համար: Արդ, տվյալ ձևաբանական փոփոխությունը տեղի է ունեցել համաբանական համահարթեցման (պատճառական բայերի աորիստի հարացույցում եզ. 3-րդ դ. ցոյական հիմքի ընդհանրացման) և համաբանական ընդլայնման (*է* լծորդության պարզ բայերի կենսունակ, ցոյական խոնարհման տիպը բեական հիմքով պատճառական բայերի վրա տարածելու) համատեղ գործողությամբ: Բացի այդ, պատճառական բայերի ոչ ցոյական/ցոյական գուգաձևության (հմմտ. *հեռացրի/հեռացրեցի*) առաջացմանը անշուշտ նպաստել է նաև մի խումբ

<sup>12</sup> Տե՛ս **J. Karst**, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901, էջ 336 և 315-317, § 371:

<sup>13</sup> Այստե՛նք, որ արդեն միջին հայերենի շրջանում *ոյ > ու* ենչունափոխությունն ավարտված իրողություն էր (տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա., Եր., 1972, էջ 102-103):

<sup>14</sup> Տե՛ս **J. J. Schröder**, Thesaurus Linguae Armenicae, Antiquae et Hodiernae (Արամեան լեզուին գանձ), Amstelodami, 1711, էջ 317:

<sup>15</sup> Տե՛ս **Ս. Պալասանյան**, Ընդհանուր տեսություն արևելեան նոր գրատր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 79, **նույնի**՝ Քերականության մայրենի լեզուի, Թիֆլիս, 1874, էջ 162:

<sup>16</sup> Տե՛ս **Մ. Աբեղյան**, Աշխարհաբարի քերակ..., էջ 109:

անկանոն բայերի նմանատիպ զուգաձև խոնարհումը (հմմտ. *բերի/բերեցի, զարկի/զարկեցի*): Ի դեպ, այդ անկանոն բայերի դեպքում նույնպես պատմականորեն աորիստի ցոյականացման միտում է գործել: Բայց նկատենք, որ անկանոն բայերի արմատական/ցոյական զուգաձևությունը կարող էր սկիզբ առնել ոչ թե (կամ ոչ այնքան) եզ. 3-րդ դ. *եց* վերջավորության հիման վրա, այլ մի խումբ բայերի *-անեմ >> -եմ* պարզեցման ժամանակ առաջացած զուգաձև խոնարհման (հմմտ. աոր. *զարկի/զարկեցի*) համաբանությամբ (տե՛ս ստորև): Դեռ ավելին. կարծում ենք այդ զուգաձև խոնարհումը նույնպես նպաստել է աորիստի *եց* հիմքակազմ ածանցի վերախմաստավորմանը իբրև դիմային վերջավորություն:

Ինչ վերաբերում է պատճառական բայերի հարցում բարբառների տվյալներին, մի խումբ բարբառներ պահպանել են վաղ շրջանի *ուց* (< գրբ. *ուց*) վերջավորությունը<sup>17</sup>, և քանի որ *եց* վերջավորություն չեն ստացել, դրանով իսկ բացառված է եղել ընդհանուր ցոյականացման հնարավորությունը (բնականաբար այստեղ նկատի չեն առնվում գրաբարատիպ ցոյական հիմքը պահպանած բարբառները<sup>18</sup>, որոնցում *ուց* (< գրբ. *ուց*)-ը չի վերախմաստավորվել, այլ շարունակում է գործառնել իբրև հիմքակազմ ածանց): Իսկ այն բարբառներում, որտեղ պատճառական բայերը ձեռք են բերել աորիստի ընդհանուր հիմք և եզ. 3-րդ դ. *եց* վերջավորություն, նկատելի է երեք տիպի զարգացում. **ա)** որոշ բարբառներ անխախտ պահպանել են ընդհանուր հիմքը չնայած եզ. 3-րդ դ. ձևում *եց* վերջավորության առկայությանը<sup>19</sup>, **բ)** այլ բարբառներում ընդհանուր հիմքը ցոյականացման է ենթարկվել, բայց ընդհանուր հիմքը ևս պահպանվել է, որի հետևանքով առաջացել է ընդհանուր/ցոյական զուգաձև խոնարհում<sup>20</sup>: Ի դեպ, Շամախիի շրջանի Քյարքյանջի բարբառում նույնպես պատճառական բայերը աորիստում միաժամանակ խոնարհվում են և՛ ընդհանուր և՛ ցոյական հիմքով, իսկ բուն Շամախիի բարբառում ըստ բնակավայրերի խոնարհվում են կա՛մ միայն ընդհանուր, կա՛մ միայն ցոյական հիմքով<sup>21</sup>, **գ)** մի շարք բարբառներում էլ պատճառական բայերը աորիստում խոնարհվում են բացառապես ցոյական հիմքով, ճիշտ ինչպես է լծորդության պարզ բայերը<sup>22</sup>: Այդ առումով ուշագրավ է, որ

<sup>17</sup> Տե՛ս **Մ. Ասատրյան**, Լոռու խոսվածքը, Եր., 1968, էջ 138, **Ալ. Մարգարյան**, Գորիսի բարբառը, Եր., 1975, էջ 207, 209, **Ռ. Բաղդասարյան**, Կոզենի բարբառը, Եր., 1961, էջ 139-140:

<sup>18</sup> Տե՛ս, օրինակ, **Հ. Աճառյան**, Քննություն Պոլսահայ բարբառի, Եր., 1941, էջ 144, **նույնի՝** Քննություն Վանի բարբառի, Եր., 1952, էջ 180-182, **Թ. Դանիելյան**, Մալաթիայի բարբառը, Եր., 1967, էջ 147:

<sup>19</sup> Տե՛ս **Ռ. Մարկոսյան**, Արարատյան բարբառ, Եր., 1989, էջ 173, **Վ. Կասովայան**, Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Եր., 2016, էջ 378:

<sup>20</sup> Տե՛ս **Հ. Աճառյան**, Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Եր., 1940, էջ 270-271, **Ս. Հ. Բաղդասարյան-Թարխանյան**, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Եր., 1973, էջ 138:

<sup>21</sup> Տե՛ս **Ռ. Հ. Բաղդասարյան**, Շամախիի բարբառը, Եր., 1964, էջ 150:

<sup>22</sup> Տե՛ս, օրինակ, **Ն. Մկրտչյան**, Բուրդուրի բարբառը, Եր., 1971, էջ 141, նաև՝ էջ 137, § 277, **Ա. Ղ. Լուսինց**, Արեշի բարբառը, Եր., 1982, էջ 114, 116:

Արեշի բարբառում նույն ցոյականացման գործընթացը լիովին իրականացվել է նաև նախկին արմատական աորիստի հիմքով անկանոն բայերի դեպքում, ուստի վերջիններս նույնպես աորիստում խոնարհվում են միայն ցոյական հիմքով՝ *բերեցի, տուվեցի, օրեցի, դիրեցի* և այլն<sup>23</sup>:

Այսպիսով բերված տվյալներից ակնհայտորեն երևում է, որ պատճառական բայերի աորիստի ցոյականացման միտումը գործել է նաև մի շարք բարբառներում: Հետևաբար արդի արևելահայերենի պատճառական բայերի ցոյական տարբերակները նույնպես համաբանական-ձևաբանական փոփոխության արդյունքում առաջացած միանգամայն բնական ձևեր են, այլ ոչ թե «կեղծ գրական ձևեր»: Իսկ թե ինչու դրանք գրական լեզվում չեն դարձել կանոնիկ, կարծում ենք, տվյալ դեպքում, ինչպես նաև այն բարբառներում, որտեղ նույնպես աորիստի ընկան հիմքը պահպանվել է անփոփոխ, համաբանական համահարթեցման և ընդլայնման միտումը սահմանափակվել և խոչընդոտվել է մեկ այլ՝ ծանրաշունչ ու անբարեհունչ արտասանությունից հնարավորինս խուսափելու միտումով: Ծանրաշունչ արտասանությունն առավել ակնառու է *ե* լծորդության պարզ և *ա* լծորդության *են* անանցավոր բայերի պատճառականների դեպքում՝ երկու հաջորդական վանկում կրկնվող *եց* հնչյունակապակցության պատճառով (հմմտ. *սպասեցրեցի, տխրեցրեցի, մտտեցրեցի, վախեցրեցի*), թեև բայահիմքում երկու *ց*-երի առկայությունն ինքնին արդեն անբարեհունչ արտասանություն է ստեղծում (օր.՝ *զարմացրեցի, փախցրեցի*): Ի դեպ, ուրիշ քերականական ձևերում ևս այլընտրանքային հնարավորության դեպքում գրական արևելահայերենը փորձում է խուսափել համանման անբարեհունչ արտասանությունից: Անշուշտ դրանով պետք է բացատրել *մատուցել, հատուցել* և նման բայերի (որոնք արդեն չեն գիտակցվում որպես երբեմնի պատճառականներ, այլ համաժամանակյա տեսանկյունից պարզ բայեր են) հոգ. հրմ. *մատուցե՛ք, հատուցե՛ք* ձևերին զուգահեռ *մատուցեցե՛ք, հատուցեցե՛ք* ձևերի անգործածական լինելը՝ այլ բայերի դեպքում *-ե՛ք/-եցե՛ք* զուգաձևության առկայության պարագայում<sup>24</sup>: Մյուս կողմից, մի շարք բարբառներում պատճառական բայերի հարաբերականորեն կայուն ընկան/ցոյական զուգաձևությունը փաստորեն նշված երկու հակադիր միտումների մրցակցային պայքարի արդյունք է: Բանն այն է, որ հակադիր միտումների առկայության դեպքում համաբանական փոփոխության գործընթացը (հետևաբար նաև զուգաձևության փուլը) կարող է անհամեմատ երկար տևել: Դեռ ավելին. տվյալ լեզվական միտումը հետագայում կարող է հակադարձվել, այսինքն՝ փոխհաջորդվել հակառակ միտումով<sup>25</sup>: Ի դեպ, 20-րդ դ. 80-ական թթ. սկզբին Թ. Ղարազուլյանը

<sup>23</sup> Հմմտ. **Ա. Ղ. Լուսինց**, նշվ. աշխ., էջ 121-123:

<sup>24</sup> Հրամայականի այդ ձևերի համար տե՛ս **Յու. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 43-45:

<sup>25</sup> Տե՛ս **Մ. Ավետիսյան**, Հորանջի դիրքում I և Ս ձայնավորների կայունության աստիճանը բառասկզբում և բառամիջում (տարածամանակյա-տիպաբանական քննություն)

խոսակցական լեզվում պատճառական բայերի աորիստի ցոյականացման բավական ինտենսիվ միտում է արձանագրում «Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում խոսակցական լեզվում լայնորեն տարածվեցին...» ձևակերպմամբ<sup>26</sup>, և նշում, որ բեական հիմքով ձևերը «զնայով ավելի սահմանափակ կիրառություն են ստանում խոսակցական լեզվում»<sup>27</sup>: Սակայն հետագայում այդ միտումը հակադարձվել է, եթե հաշվի առնենք, որ այժմ խոսակցական լեզվում, ըստ Լ. Թեյյանի, առավել տարածված են բեական հիմքով ձևերը<sup>28</sup>: Նախորդ միտումի հակադարձումը, անշուշտ, մեծապես պայմանավորված է եղել *է* լծորդության պարզ բայերի ցոյական հիմքի ապացոյականացման միտումով: Կարծում ենք պատահական չէ նաև, որ անկանոն բայերի արմատական/ցոյական գուգաձևերից արմատականները նույնպես բնորոշ են խոսակցական լեզվին<sup>29</sup>, որքանով որ ապացոյականացման ընդհանուր միտումի պարագայում արմատական տարբերակներին առավել նախապատվություն տալը միանգամայն բնական է: Բայց քանի որ *է* լծորդության պարզ բայերի ապացոյականացման գործընթացը արդի խոսակցական լեզվում դեռևս ընթացիկ փոփոխություն է, ուստի արմատական/ցոյական գուգաձևության փուլը դեռ շարունակվում է, որն էլ իր հերթին համաբանական նպաստավոր պայմաններ է ստեղծում նաև պատճառական և անկանոն բայերում նմանատիպ գուգաձևության պահպանման համար:

Ինչպես տեսանք, *է* լծորդության պարզ բայերի աորիստի ապացոյականացման միտումը անանցողական բայերի դեպքում ուղեկցվում է ներգործաձև խոնարհումը կրավորաձև խոնարհմամբ փոխարինելու միտումով, որն էլ վկայում է ապացոյականացման և կրավորաձևացման միտումների պատմականորեն սերտ փոխկապակցվածության մասին: Մնում է պարզել, թե այդ միտումները որտեղից են սկիզբ առնում, և դրանց համար ինչ նախադրյալներ ու դրդապատճառներ են եղել: Կարծում ենք՝ արդի արևելահայերենի *ն* և *չ* ածանցով բայերի կրավորաձև խոնարհումը (հմմտ. *հասա, մտա, փախա*) չէր կարող համաբանական հիմք ծառայել անանցողական բայերի ապացոյականացման և կրավորաձևացման համար, քանի որ ներկայի հիմքի և աորիստի հիմքի ձևաբանական հարաբերակցությունը միանգամայն տարբեր է *է* լծորդության պարզ բայերի և *ն/չ* ածանցով բայերի դեպքում: Բացի այդ, *ն/չ* ածանցով բայերի կրավորաձև խոնարհումը *անանցողական - անցո-*

// Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2014, էջ 237-240:

<sup>26</sup> Տե՛ս Թ. Ղարազույան, Ակնարկներ ժամանակակից հայերեն խոսակցական լեզվի // Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն, Եր., 1981, էջ 100:

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Տե՛ս Լ. Թեյյան, նշվ. աշխ., էջ 69:

<sup>29</sup> Տե՛ս Յու. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 57-59, Յու. Ավետիսյան, Լ. Թեյյան, Լ. Մարգարյան, Լ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 191-194, նաև՝ Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 225-227:

դական տարբերակում չի ճանաչում (հմմտ. *հասա, իջա, մտա և գտա, տեսա, ասա*), մինչդեռ *է* լծորդության պարզ բայերի դեպքում կրավորաձև խոնարհումը բնորոշ է անանցողական բայերին, իսկ անցողականները սովորաբար պահպանում են ներգործաձև խոնարհումը: Թեև մի խումբ անկանոն բայերի աորիստի *արմատական/ցոյական* զուգաձև խոնարհումը (հմմտ. *բերի, բերիր, բերաւ և բերեցի, բերեցիր, բերեց, ինչպես նաև նստայ, նստար, նստաւ և նստեցի, նստեցիր, նստեց, սկսայ, սկսար, սկսաւ և սկսեցի, սկսեցիր, սկսեց* ևն<sup>30</sup>) սկզբունքորեն կարող էր նպաստել *է* լծորդության պարզ բայերի ապացոյականացման և կրավորաձևացման միտումների առաջացմանը, սակայն դա մեզ քիչ հավանական է թվում ժամանակագրական առումով: Բանն այն է, որ այդ անկանոն բայերի կրավորաձև խոնարհումը, այդ թվում՝ *բերուայ, բերուար, բերուաւ* տիպի արմատական կրավորականի ձևերը արդեն 20-րդ դ. առաջին տասնամյակներից հետո քերականների կողմից գրեթե չեն հիշատակվում արդի արևելահայերենի ո՛չ գրական, ո՛չ էլ խոսակցական տարբերակների համար՝ բացառությամբ եզ. 3-րդ դ. *աւլ* (<*աւ*)-ով մի քանի վերապրուկային մնացորդների՝ *նստաւլ, տվաւլ, բերաւլ, սկսաւլ*<sup>31</sup>: Իսկ ընդհանուր առմամբ արմատական հիմք և ներգործաձև խոնարհում ունեցող անկանոն բայերի աորիստի խոսակցական տարբերակները նշվում են աոր. եզ. 3-րդ դ. *եց* վերջավորությամբ<sup>32</sup>: Բացի այդ, վերը նշված «Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն» (Եր., 1981) ժողովածուի հեղինակները, ըստ էության, այդ ժամանակվա խոսակցական հայերենի համար *է* լծորդության պարզ բայերի աորիստի ապացոյականացման և կրավորաձևացման միտում չեն արձանագրում, իսկ նրանց կողմից նշվող *նստաւլ, տվաւլ, բերաւլ, սկսաւլ, ասաւլ*<sup>33</sup> և *ասի, տվի*<sup>34</sup> ձևերը իրականում ոչ թե նոր միտումի դրսևորումներ են, այլ նախկինից պահպանված ձևեր: Մյուս կողմից, ինչպես տեսանք, Թ. Ղարազույանը խոսում էր պատճառական բայերի ցոյականացման բուռն գործընթացի մասին, որը, դատելով բարբառների վերը դիտարկված տվյալներից, ոչ այլ ինչ է, քան աորիստի ցոյականացման ընդհանուր միտումի մասնավոր դրսևորումներից մեկը: Այդ պարագայում մնում է ենթադրել, որ ապացոյականացման և կրավորաձևացման միտումները արդի խոսակցական լեզվում ի հայտ են եկել ավելի ուշ՝ համենայն դեպս 20-րդ դ. 80-ական թթ. հետո: Ուստի մեզ

<sup>30</sup> Բերված ձևերի համար տե՛ս **Ս. Պալասանեան**, Ընդհանուր տեսություն..., էջ 91-94, **Ս. Աբեղեան**, Աշխարհաբարի քերակ..., էջ 121-124:

<sup>31</sup> Բերված ձևերի համար տե՛ս **Թ. Ղարազույան**, նշվ. աշխ., էջ 98:

<sup>32</sup> Տե՛ս, օրինակ, **Ս. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 225-227, **Թ. Ղարազույան**, նշվ. աշխ., էջ 97, նաև **Հ. Բարսեղյան**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 303-308:

<sup>33</sup> Տե՛ս **Թ. Ղարազույան**, նշվ. աշխ., էջ 98:

<sup>34</sup> Տե՛ս **Հ. Զաքարյան**, Հայերենի հասարակական տարբերակումը Երևանում // Ժամակակակից հայերեն խոսակցական..., էջ 145:

ավելի հավանական է թվում, որ դրանք արդի խոսակցական լեզվին են անցել բարբառներից, մանավանդ որ այդ միտումները հայերեն մի շարք բարբառներում (որոնց մի մասը, ի դեպ, տեղակայված է Երևանի շրջակայքում) իրացվել են լիովին և դարձել ընդհանուր օրինաչափություն: Այդ առումով նկատելի է հիմնականում երեք տիպի զարգացում. **ա)** որոշ բարբառներում աորիստի ապացոյականացման գործընթացը ընդգրկել է թե՛ անցողական և թե՛ անանցողական բայերը. բացի այդ, անանցողական բայերի դեպքում ներգործաձև խոնարհումը փոխարինվել է կրավորաձև խոնարհմամբ<sup>35</sup>, **բ)** այլ բարբառներում ապացոյականացման են ենթարկվել միայն անանցողական բայերը՝ դարձյալ ներգործաձևից անցնելով կրավորաձև խոնարհման տիպին, իսկ անցողական բայերը անփոփոխ պահպանել են ցոյական հիմքով ներգործաձև խոնարհումը<sup>36</sup>, **գ)** մի խումբ բարբառներում էլ ապացոյականացման գործընթացը լիովին իրականացվել է միայն անանցողական բայերի դեպքում՝ դարձյալ ուղեկցվելով կրավորաձևացման միտումով, իսկ անցողական բայերը հանդես են բերում արմատական/ցոյական զուգաձև խոնարհում (բացառությամբ միայն ցոյական ձև ունեցող եզ. 3-րդ դեմքի) և ներգործաձև վերջավորություններ<sup>37</sup>: Կարծում ենք՝ Արարատյան բարբառի՝ Հոկտեմբերյանի շրջանի խոսվածքները նույնպես ապացոյականացման և կրավորաձևացման հարցում համապատասխանում են այս վերջին տիպի բարբառներին: Թեև Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանը հիշյալ խոսվածքները նկարագրելիս չի անդրադարձնում կրավորաձև խոնարհման դեպքում *ե* (բարբառային՝ *է*) լծորդության անանցողական բայերի աորիստի արմատական կամ ցոյական բնութիւն, այլ բավարարվում է միայն ներգործաձև խոնարհման *արմատական/ցոյական* (և պատճառական բայերի *րեական/ցոյական*) զուգաձևության նշումով<sup>38</sup>, բայց նույն գրքի վերջում կցված բարբառային նյութերի (տեքստերի) քննությամբ մենք հանգել ենք այն եզրակացության, որ անանցողական (կրավորական և չեզոք) բայերը աորիստում կանոնավորապես խոնարհվում են արմատական հիմքով և կրավորաձև վերջավորություններով. հմմտ. *քանդրվավ*, *զառթնամ*, *թափան* (էջ 277), *ժողնրվան* (էջ 293), *ուռուցվորան*, *աբրանք*, *թափավ* (էջ 290), *քրնան*, *զառթընավ* (էջ 298), *նըստավ* (էջ 299) և այլն:

Այսպիսով՝ նշված երեք տիպի բարբառային զարգացումների դեպքում էլ անանցողական բայերի ապացոյականացման և կրավորաձևացման գործընթացները իրականացվել են լիովին: Մինչդեռ անցողա-

<sup>35</sup> Տե՛ս Մ. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Եր., 1962, էջ 106-107:

<sup>36</sup> Տե՛ս Ա. Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Եր., 1978, էջ 131-132, Մ. Մուրադյան, Շատալսի բարբառը, Եր., 1962, էջ 134-144:

<sup>37</sup> Տե՛ս Զ. Մ. Մաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը (Ապարան-Արագածի տարածք), Եր., 1985, էջ 121-122, Վ. Կատվայան, նշվ. աշխ., էջ 378, 418-419:

<sup>38</sup> Տե՛ս Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 138-141:



կան բայերի ապացոյականացման միտումը առաջին դեպքում իրացվել է լիովին՝ հաղթահարելով գուգաձևության փուլը և վերջնականապէս դուրս մղելով նախկին ցոյական հիմքը: Ուստի միայն եգ. 3-րդ դ. ձևում պահպանված *եց* ածանցը վերաիմաստավորվել է և դարձել դիմային վերջավորություն: Երկրորդ դեպքում աորիստի ապացոյականացման միտումը առհասարակ չի տարածվել անցողական բայերի վրա: Իսկ երրորդ դեպքում անցողական բայերի ապացոյականացման գործընթացի հետևանքով առաջացած արմատական/ցոյական գուգաձևության փուլը դեռ շարունակվում է:

Ինչ վերաբերում է նշված բարբառներում ապացոյականացման և կրավորաձևացման միտումների առաջացման պատմական նախադրյալներին, կարծում ենք՝ տվյալ դեպքում կարևոր դեր են խաղացել մի շարք գործոններ, որոնց մի մասն արդեն առկա է եղել հին հայերենում: Այդ առումով նախ և առաջ կուգենայինք նշել գրբ. *բերեմ, ածեմ, հանեմ* բայերի արմատական հիմքով ներգործածն և *նստիմ* բայի արմատական հիմքով կրավորաձև խոնարհումը աորիստում<sup>39</sup>, ինչպէս նաև *համբերեմ* բայի *արմատական/ցոյական* գուգաձև խոնարհումը (*համբերի/համբերեցի*)<sup>40</sup>: Վերջինիս գուգաձևության հարցում անշուշտ դեր է խաղացել, մի կողմից, նրա կազմում *բերեմ* բաղադրիչի գիտակցումը, մյուս կողմից՝ *ե* լծորդության պարզ բայերի համաբանական ազդեցությունը: Նկատենք նաև, որ *բերեմ, ածեմ, հանեմ* բայերի աորիստի ոչ ցոյական խոնարհումը հ.-ե. իմպերֆեկտի<sup>41</sup>, իսկ *նստիմ* բայի ոչ ցոյական խոնարհումը թերևս հ.-ե. արմատական աորիստի<sup>42</sup> վերապրուկային մնացորդներ են հայերենում: Բացի այդ, կարծում ենք՝ *ե* լծորդության պարզ բայերի աորիստի ապացոյականացման միտումի համար կարևոր նախադրյալ է ծառայել նաև մի խումբ –*եմ/անեմ* տիպի բայագույգերի՝ հին հայերենից վկայված *արմատական/ցոյական* գուգաձև խոնարհումը, ինչպէս ներկ. *լիզեմ*, աոր. *լիզեցի* և ներկ. *լիզանեմ*, աոր. *լիզի*, ներկ. *տարածեմ*, աոր. *տարածեցի* և ներկ. *տարածանեմ*, աոր. *տարածի* և այլն<sup>43</sup>: Ի դեպ, գրբ. *ան* ածանցով բայահիմքերի հնագույն շերտը ծագում է հ.-ե. \**ne/n-* ռնգային միջաձանցավոր ներկայի հիմքից. հմմտ. հ.-ե. \**li-ne-k<sup>w</sup>/li-n-k<sup>w</sup>-* > (\**լիք-ան-եմ* >) գրբ. *լք-ան-եմ* և այլն: Բայց նախագրային հայերենում *ան* հիմքակազմ ածանցը երկրորդաբար տարածվել է նաև սկզբնապէս այլ տիպի պատկանող մի խումբ բայերի վրա<sup>44</sup>: Արդ, կարծում ենք՝ գրբ. –*եմ/անեմ* տիպի գուգաձևութ-

<sup>39</sup> Տե՛ս **A. Meillet**, Altarmenisches Elementarbuch, Heidelberg, 1913, էջ 98:

<sup>40</sup> Տե՛ս **H. Jensen**, Altarmenische Grammatik, Heidelberg, 1959, էջ 107:

<sup>41</sup> Տե՛ս **A. Meillet**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, 2<sup>nd</sup> éd., Vienne, 1936, էջ 105-106, 114:

<sup>42</sup> Տե՛ս **Г. Джаукян**, Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 189:

<sup>43</sup> Բերված ձևերի համար տե՛ս **A. Meillet**, Altarmenisches..., էջ 99-100:

<sup>44</sup> Տե՛ս **A. Meillet**, Esquisse..., էջ 106-107, **Г. Джаукян**, նշվ. աշխ., էջ 178-179, **Ս. Ավետյան**, Հնդեվրոպական ռնգային միջաձանցավոր ներկայի հիմքերի դրսևորումը

յունների մի մասն առաջացել է հենց դրա հետևանքով: Մյուս կողմից՝ արդեն հին հայերենում *ան* ածանցով բայերը համապատասխան ածանցագուրկ ձևով փոխարինելու որոշակի միտում էր նկատվում, որի շնորհիվ նույնպես, բնականաբար, *-եմ/-անեմ* տիպի ընթացիկ կամ տևական զուգաձևության նոր դեպքեր են առաջացել: Ինչպես նշում է Ա. Այտընյանը, գրք. *ան* ածանցով բայերի մի զգալի մասը Թ-Ժ դարերից ի վեր պարզվել և *ե* լծորդության պարզ բայերի շարքն է անցել, իսկ այդ պարզման հետքերն ու սկիզբը հասնում են մինչև Ե դար<sup>45</sup>:

Բայց նկատենք, որ որոշ դեպքերում զուգաձևության փուլը պահպանվել է հայերենի պատմական զարգացման ընթացքում և արտացոլվել մի շարք բարբառներում: Այդ առումով ուշագրավ է հատկապես գրք. *գարկանեմ* բայը, որը, օրինակ, Երզնկայի բարբառում զուգաձև խոնարհումը պահպանել է թե՛ ներկայի (և անորոշի) և թե՛ աորիստի բայահիմքում<sup>46</sup>: Որոշ բարբառներում էլ զուգաձև խոնարհումը պահպանվել է միայն աորիստում, իսկ ներկայի և անորոշի հիմքում ընդհանրացել է պարզ կամ ածանցավոր տարբերակը, ինչպես, օրինակ, Վանի բարբառում<sup>47</sup>:

Պետք է նկատի ունենալ, որ քերականական զուգաձևությունը երկկողմանի (երկուողություն) համաբանական փոփոխության ներուձակ հնարավորություն է պարունակում, որն էլ հաճախ հիմք է ծառայում նաև հակադարձ համաբանական փոփոխությամբ նոր զուգաձևերի առաջացման: Այսպես, գրք. աոր. *տարածի/տարածեցի, լիզի/լիզեցի* զուգաձևության առկայության պարագայում հավասարապես սպասելի էր, մի կողմից, օրինակ, գրք. աոր. *լուծի (լուծանեմ* բայից) ձևին համապատասխան նոր համաբանական *լուծեցի* ձևի, մյուս կողմից, ասենք, գրք. աոր. *ջախեցի/ջաղխեցի (ջախեմ/ջաղխեմ* բայից – ՆՀԲ<sup>48</sup>, հ. 2, էջ 667) ձևին համապատասխան նոր համաբանական *ջախի/ջաղխի* ձևի առաջացումը: *Լուծեցի* տիպի ցոյական նոր ձևերի առաջացման մասին արդեն վերը խոսվեց: Ինչ վերաբերում է *ջախի/ջաղխի* տիպի արմատական նոր ձևերի առաջացմանը, Ա. Այտընյանը հիշատակում է նախամիջինհայերենյան շրջանից (ըստ հայերենի այտընյանական շրջանաբաժանման միջին դարերից<sup>49</sup>) վկայված նաև այդպիսի ձևեր, օր.

---

գրաբարում // Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2005, № 3, էջ 81-83:

<sup>45</sup> Տե՛ս **Ա. Այտընյան**, Քննական քերականությունն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, մաս (2-րդ)՝ Քերականությունն արդի հայերեն լեզուի, էջ 60, մաս (1-ին)՝ Նախաշափղ, էջ 92:

<sup>46</sup> Տե՛ս **Դ. Կոստանդյան**, Երզնկայի բարբառը, Եր., 1979, էջ 91, 106-107, 133: Հմմտ. նաև՝ Մոկաց բարբառի *գորկիլ* (< *գարկել*) և *գոնիլ* (< *գարկնել* < *գարկանել*) զուգաձևերը (տե՛ս **Զ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973, էջ 84):

<sup>47</sup> Տե՛ս **Զ. Աճառյան**, Քննություն Վանի..., էջ 170-171: Հմմտ. նաև՝ գր. արևելահայ. աոր. *գարկի/գարկեցի*:

<sup>48</sup> Այս և հետագա շարադրանքում ՆՀԲ նշումով հղում է տրվում *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2 (Վենետիկ, 1836-1837)* բառարանին:

<sup>49</sup> Տե՛ս **Ա. Այտընյան**, նշվ. աշխ., մաս (1-ին)՝ Նախաշ..., էջ 132, ծան. 2:

առք. *ջաղիւեր, ցողեր* (փխ.՝ *ջախեցեր, ցողեցեր*), իսկ այդ գործընթացի սկիզբը կարելի է տեսնել 5-րդ դարում Բուզանդի և Մծբինացու մոտ առկա *կռուաւ* (փխ. *կռուեցաւ*) ձևում<sup>50</sup>: Նկատենք, որ չեզոք սեռի *կռուիւմ, եցայ* բայը ունեցել է *ե* լծորդության *կռուեմ, եցի* զուգաձև դարձյալ անանցողական (չեզոք) իմաստով<sup>51</sup>, և որ չեզոք սեռի մի շարք այլ բայեր ևս հին հայերենում *-եմ, եցի/-իւմ, եցայ* զուգաձևություն էին հանդես բերում, օր.՝ *մոլորեմ, եցի/մոլորիւմ, եցայ* (ՆՀԲ, հ. 2, էջ 294), *յամառեմ, եցի/յամառիւմ, եցայ* (ՆՀԲ, հ. 2, էջ 318), *համաձայնեմ, եցի/համաձայնիւմ, եցայ* (ՆՀԲ, հ. 2, էջ 17) և այլն: Արդ, եթե նկատի ունենանք, որ գրաբարում *ի* լծորդությունը հանդես է գալիս որպես *ե* լծորդության բայերի կրավորականի ձև<sup>52</sup>, և որ ներգործական բայերը կրավորաձև խոնարհման դեպքում, բայիմաստի բնույթով պայմանավորված, կարող են արտահայտել ոչ միայն բուն կրավորականի, այլև չեզոքի (կրավորակերպ չեզոքի) իմաստ (հմմտ. *հնազանդեմ, եցի, ն., հնազանդիւմ, եցայ, չ.*, – ՆՀԲ, հ. 2, էջ 105, *խոտորեմ, եցի, ն., խոտորիւմ, եցայ, չ.*, – ՆՀԲ, հ. 1, էջ 970, *տրտմեմ, եցի, ն., տրտմիւմ, եցայ, չ.*, – ՆՀԲ, հ. 2, էջ 899, *սթափեմ, եցի, ն., սթափիւմ, եցայ, չ.*, – ՆՀԲ, հ. 2, էջ 712), ապա մի խումբ բայերին բնորոշ *-եմ, եցի/-անեմ, ի, ն. և -իւմ, եցայ/-անիւմ, այ, կ., չ.* զուգաձևության առկայության պարագայում (հմմտ. *տարածեմ, եցի/տարածանեմ, ի, ն. և տարածիւմ, եցայ/տարածանիւմ, այ, չ.*) լիովին հասկանալի է դառնում կրավորակերպ չեզոք *կռուեցաւ* ձևին զուգահեռ նոր՝ արմատական հիմքով *կռուաւ* ձևի առաջացման համաբանական գործընթացը: Բացի այդ, կարծում ենք՝ կրավորակերպ չեզոքների առկայությունը պատմականորեն մեծապես նպաստել է առհասարակ չեզոք սեռի և կրավորական սեռի բայերի միջև ձևաբանական սերտ փոխհարաբերության ձևավորմանը, որը, ի դեպ, կարելի է տեսնել նաև վերը նշված բարբառներում կրավորական և չեզոք բայերի աորիստի միասնական ապացոյականացման և կրավորաձևացման գործընթացում:

Եվ վերջապես, կարծում ենք, անանցողական բայերի ապացոյականացման և կրավորաձևացման հարցում կարևոր դեր է խաղացել նաև այն հանգամանքը, թե *վ* ածանցով կրավորականի ձևերը ինչ կերպ են ըմբռնվել ու վերլուծության ենթարկվել խոսողների կողմից: Ինչպես հայտնի է, միջին հայերենում ներկա կրավորականը հաճախ նույն հեղինակի մոտ հանդիպում է թե՛ ներկայի և թե՛ աորիստի հիմքից *վ* (գրությանբ՝ *վ/ու/ւ*) ածանցով կազմված ձևերով, ինչպես՝ *լվանվի* և *լվացվի*, *ղնվի* և *ղրուի*, *լնուի/լնվի* և *լցուի/լցվի*, *գտնուի* և

<sup>50</sup> Տե՛ս նույն տեղը, մաս (1-ին)՝ Նախաշ..., էջ 171, ծան. 8 և էջ 98, ծան. 77:

<sup>51</sup> Տե՛ս ՆՀԲ, հ. 1, էջ 1128, նաև՝ **Ռ. Ղազարյան**, Գրաբարի բառարան, հ. 1, Եր., 2000, էջ 676:

<sup>52</sup> Տե՛ս **A. Meillet**, *Altarmenisches...*, էջ 98:

<sup>53</sup> ՆՀԲ-ն կրավորակերպ չեզոք բայերը նշում է *ձայնակրական* եզրույթով, որի մասին տե՛ս **Մ. Սեբաստացի**, Քերականություն գրաբարի լեզուի հայկազան սեռի, Վենետիկ, 1730, էջ 304-305:

*գտուի/գտվի*: Մակայն *ե* (և *ի*) լծորդության պարզ բայերի ներկա կրավորականը կանոնավորապես կազմվում է միայն ներկայի հիմքից, օր. *այրուին, բաժնվին, գրվի, խաբվի, խրատուին* և այլն<sup>54</sup>: Ըստ Յ. Կարստի ներկա կրավորականը միջին հայերենում սկզբնապես կազմվում էր ներկայի հիմքից, իսկ ավելի ուշ աորիստ կրավորականի ազդեցությամբ սկսում է կազմվել նաև աորիստի հիմքից (բացառությամբ *ե* լծորդության պարզ բայերի): Դրանով էլ հենց պայմանավորված է միջին հայերենում ներկա կրավորականի բայահիմքային զուգաձևությունը (հմմտ. *լվան-վի* և *լվաց-վի*): Բայց ի վերջո զուգաձևության փուլը հաղթահարվում է աորիստի հիմքի օգտին, այնպես որ աշխարհաբարում ներկա կրավորականը ներկայի հիմքից կազմվում է միայն *ե* (և *ի*) լծորդության պարզ բայերի դեպքում, իսկ մնացած բայերի ներկա կրավորականը սովորաբար կազմվում է աորիստի հիմքից<sup>55</sup>: Վերջինի դեպքում նկատվող որոշ բացառությունները (օր. *գտնել-գտնվել, տեսնել-տեսնվել*) բացատրվում են *ե* լծորդության պարզ բայերի (հմմտ. *բռնել-բռնվել, մատնել-մատնվել*) համաբանությամբ<sup>56</sup>: Ինչ վերաբերում է միջին հայերենում աորիստ կրավորականի կազմությանը, *ե* լծորդության պարզ բայերի դեպքում այն կազմվում է ներկայի հիմքից՝ ներկա կրավորականի հիմքին ցոյական ածանցի և աորիստի կրավորաձև վերջավորությունների ավելացմամբ (հմմտ. *ծեծու-եց-աւ, ծախու-եց-աւ, պսակու-եց-աւ*), իսկ մնացած բայերի աորիստ կրավորականը կազմվում է աորիստի հիմքից՝ կրավորաձև վերջավորություններից առաջ *վ* ածանցի ներմուծումով (հմմտ. *բաց-ու-աւ, զարկ-ու-աւ, առ-ու-աւ*՝ գրբ. *բաց-աւ, զարկ-աւ, առ-աւ* ձևերի դիմաց)<sup>57</sup>:

Որքանով մեզ հայտնի է, հայերենագիտության մեջ դեռևս բացատրված չէ, թե որն է եղել աորիստ կրավորականի այդ երկակի կազմության պատճառը: Մեր կարծիքով, տվյալ դեպքում երկակի կազմությունը պայմանավորված է եղել խոսողների գիտակցության մեջ ներկա կրավորականի ձևի երկու տարբեր տիպի վերլուծությամբ: Նկատենք, որ *վ* ածանցի դիրքը միջինհայերենյան ներկա կրավորականի ձևում, ինչպես նաև բայական ելակետային ձև դարձած անորոշ դերբայում (օր. *այր-վ-իւ* և *այր-վ-իլ*) *վ* ածանցից գուրկ չեզոք (այն է՝ նախկին կրավորական և կրավորակերպ չեզոք) ձևի<sup>58</sup> (օր. *այր-իւ* և *այր-իլ*) համեմատությամբ կարող էր խոսողների կողմից ըմբռնվել երկու կերպ. **ա**) որպես *վ* ածանցի ներմուծում անմիջապես ներկայի (և անորոշի) հիմքից (օր. *այր-*) հետո, **բ**) որպես *վ* ածանցի ներմուծում անմիջապես

<sup>54</sup> Տե՛ս **J. Karst**, նշվ. աշխ., էջ 292-295:

<sup>55</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 297-298:

<sup>56</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 207:

<sup>57</sup> Տե՛ս **J. Karst**, նշվ. աշխ., էջ 296-298:

<sup>58</sup> Միջին հայերենը փորձել է կրավորակերպ չեզոք ձևը տարբերակել բուն կրավորականից. օր. *այրել* – ներգ., *այրիլ* – կր. չ., *այրվիլ* – կր. (տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951, էջ 248):

ներկայի դիմային (-իւ, -իս, -ի նն) և անորոշի (-իլ) վերջավորություններից առաջ: Մյուս կողմից, հայոց լեզվի պատմության և հայերենի բարբառների տվյալները վկայում են, որ միջին հայերենի շրջանից ի վեր ներկա կրավորականի և աորիստ կրավորականի բայահիմքերի համաբանական ընդհանրացման, մասնավորապես՝ բայահիմքի վ՛ ածանցին նախորդող բաղադրիչ մասը ներկայում և աորիստում մեկ ընդհանուր, անփոփոխ տեսքով կիրառելու հետևողական միտում է գործել: Արդ, քանի որ խոսողները է լծորդության պարզ բայերի դեպքում նախապատվություն են տվել ներկա կրավորականի վերլուծության առաջին տիպին, այսինքն՝ վ՛ ածանցի դիրքը ըմբռնվել է դրան անմիջապես նախորդող բաղադրիչ մասի (ներկայի բայահիմքի) հարաբերությամբ, ուստի նույն սկզբունքը կիրառվել է նաև աորիստ կրավորականի կազմության ժամանակ: Կարծում ենք՝ վերլուծության այդ եղանակի ընտրությունը խոսողների կողմից պատահական չի եղել, քանի որ այդ դեպքում ներկայի և աորիստի նախկինից ժառանգված հարացույցը հիմքակազմության և խոնարհման հիմնական օրինաչափություններով, ըստ էության, պահպանվում էր անփոփոխ (հմմտ. գրբ. ներկ. կր. այր-իւ, այր-իս, այր-ի..., աոր. կր. այր-եց-այ, այր-եց-ար, այր-եց-աւ... և մ. հայ. ներկ. կր. այր-վ-իւ, այր-վ-իս, այր-վ-ի..., աոր. կր. այր-վ-եց-այ, այր-վ-եց-ար, այր-վ-եց-աւ...): Սակայն մնացած բայերի աորիստ կրավորականի դեպքում նույն սկզբունքի կիրառումը այնքան էլ նպատակահարմար չէր, քանի որ ներկայի բայահիմքում վ՛ ածանցին նախորդող բաղադրիչ մասը անփոփոխ չէր պահպանվում աորիստում. հմմտ. **լվան**-(վ-ի), **դն**-(վ-ի), **բան**-(վ-ի) (ներկայի հիմք) և **լվաց**-, **դր**-, **բաց**- (աորիստի հիմք): Իսկ եթե այնուամենայնիվ է լծորդության պարզ բայերի համաբանությամբ մնացած բայերի ներկա կրավորականի բայահիմքը ընդհանրացվեր ու տարածվեր նաև աորիստի վրա (ասենք, ներկ. **լվան**վ-ի, աոր. \***լվան**վ-եց-աւ, ներկ. **գողըն**վ-ի (< մ. հայ. **գողնալ** < գրբ. **գողանալ** բայից), աոր. \***գողըն**վ-եց-աւ, ներկ. **բան**վ-ի, աոր. \***բան**վ-եց-աւ, ներկ. \***աղ**վ-ի (< **աղալ** բայից), աոր. \***աղ**վ-եց-աւ նն), այդ պարագայում ներկայի և աորիստի նախկին հարացույցից գրեթե ոչինչ չէր մնա, հատկապես **ա** լծորդության պարզ և ածանցավոր բայերի դեպքում: Արդ, հատկանշական է, որ խոսողները չեն ընտրել հարացույցի հիմնովին ձևափոխման այդ ճանապարհը, այլ օգտվել են ներկա կրավորականի վերլուծության երկրորդ հնարավորությունից, այսինքն՝ վ՛ ածանցի դիրքը տվյալ դեպքում ըմբռնվել ու որոշվել է ներկայի դիմային վերջավորությունների հարաբերությամբ: Ըստ այդմ՝ այդ բայերի աորիստ կրավորականի ձևում նույնպես վ՛ ածանցը համաբանությամբ ներմուծվել է անմիջապես կրավորաձև վերջավորություններից առաջ, որի շնորհիվ հնարավոր է եղել գոնե աորիստի նախկին հարացույցը իր հիմնական գծերով պահպանել անփոփոխ (հմմտ. գրբ. աոր. կր. **լվաց**-այ, **լվաց**-ար, **լվաց**-աւ... և մ. հայ. աոր. կր. **լվաց**-վ-այ, **լվաց**-վ-ար,

*լվաց-վ-աւ...*): Այնուհետև ներկա կրավորականի և աորիստ կրավորականի բայահիմքերի համաբանական ընդհանրացման (նույնահիմքացման) միտումով պայմանավորված՝ աորիստ կրավորականի բայահիմքը ընդհանրացել և տարածվել է նաև ներկա կրավորականի (և անորոշ դերբայի) վրա (*լվաց-վ-իլ, լվաց-վ-ի* են)՝ աստիճանաբար դուրս մղելով ներկայի հիմքից կազմված ներկա կրավորականի և անորոշի ձևերը (*լվան-վ-իլ, լվան-վ-ի* են): Բայց նկատենք, որ միջին հայերենի այս լեզվական վիճակն էլ իր հերթին արդեն նախադրյալ էր պարունակում հետագա նոր համաբանական փոփոխությունների համար, քանի որ *է* լծորդության պարզ բայերի կրավորական աորիստում *վ* ածանցը և կրավորաձև դիմային վերջավորությունները ընդմիջարկված էին աորիստի *եց* ցոյական ածանցով (հմմտ. *այր-վ-եց-աւ*), մինչդեռ մնացած բայերի դեպքում *վ* ածանցը անմիջապես նախորդում էր նույն վերջավորություններին (հմմտ. *լվաց-վ-աւ*): Արդ, լեզվի հետագա զարգացման ընթացքում կրավորական աորիստի *վ* ածանցի դիրքի միօրինակացման ու միասնականացման համաբանական գործընթացում երկու հիմնական միտում է գործել:

1) Մի խումբ բարբառներում, ինչպես նաև գրական արևելահայերենում ու արևմտահայերենում, *է* լծորդության պարզ բայերի հետևորդությամբ մնացած բայերի կրավորական աորիստում *վ* ածանցից անմիջապես հետո *եց* ածանց է ներմուծվել, այնպես որ բոլոր անցողական կանոնավոր բայերի կրավորական աորիստում *վ* ածանցը և դիմային վերջավորությունները ընդմիջարկված են *եց* ցոյական ածանցով: Միայն մի խումբ անկանոն բայերի դեպքում, որոնք աորիստում առհասարակ ցոյական ածանց չեն ստանում կամ հանդես են գալիս *արմատական/ցոյական* գուգաձև խոնարհմամբ, արմատական աորիստ կրավորականի *վ* ածանցը շարունակում է հանդես գալ անմիջապես վերջավորություններից առաջ (օր.՝ *բեր-վ-աւ, զարկ-վ-աւ*), իսկ դրանց ցոյական ձևերը ենթարկվում են կանոնավոր բայերի ընդհանուր օրինաչափությանը՝ *բեր-վ-եց-աւ, զարկ-վ-եց-աւ*: Իհարկե գրական արևելահայերենում հետագայում կրավորական և կրավորակերպ չեզոք բայերի կրավորաձև խոնարհումը փոխարինվել է ներգործաձև խոնարհմամբ (օր.՝ *այրու-եց-այ >> այրուեցի, շփոթու-եց-այ >> շփոթուեցի, լուսցու-եց-այ >> լուսցուեցի, մոռացու-եց-աւ >> մոռացուեց*)<sup>59</sup>:

2) Այլ բարբառներում, ընդհակառակը, *է* լծորդության պարզ բայերը մնացած բայերի համաբանական ազդեցությամբ կրավորական աորիս-

<sup>59</sup> Այդ փոփոխության միտումը 19-րդ դ. 60-70-ական թթ. համարվում էր բարբառային երևույթ (հմմտ. Մ. Պալասանեան, Քերականութիւն մայրենի..., էջ 158, ծան., նույնի՝ Ընդհանուր տեսութ..., էջ 88, § 26), բայց արդեն 20-րդ դ. սկզբներին ներգործաձև տարբերակները դարձել էին նախընտրելի և հիմնական ձևեր, թեև *ներգործաձև/կրավորաձև* գուգաձևության փուլը դեռ լիովին չէր հաղթահարվել (հմմտ. Ն. Մելիք-Թանգեան, Աշխարհաբարի քերականութիւնը, Բ. տպագր., Նոր-Ջուղա, 1900, էջ 44, Մ. Աբեղեան, Աշխարհաբարի քերակ..., էջ 109):

տում կորցրել են *եց* ցոյական ածանցը, այնպես որ բոլոր անցողական բայերի աորիստում *վ* ածանցն անմիջապես նախորդում է կրավորաձև դիմային վերջավորություններին: Ինչպես տեսանք, այս միտումը բարբառներից անցել է նաև արդի արևելահայերեն խոսակցական լեզվին: Բարբառներում *եց* ածանցի անհետացմանը և, ըստ այդմ, աորիստի ապացոյականացման գործընթացին անշուշտ նպաստել են նաև այն մի խումբ անկանոն բայերը, որոնք ի սկզբանե խոնարհվելիս են եղել աորիստի՝ գրաբարից ժառանգված (հմմտ. գրբ. *բերեմ*, աոր. *բեր-ի* և կր. *բեր-այ*, մ. հայ. *բեր-ու-այ*, գրբ. *նստիմ*, աոր. *նստ-այ*, *զարկանեմ*, աոր. *զարկ-ի* և կր. *զարկ-այ*, մ. հայ. *զարկ-ու-այ*) կամ միջին հայերենում ձևավորված (հմմտ. մ. հայ. աոր. *դր-ի* և կր. *դր-ու-այ*) արմատական հիմքով: Բացի այդ, որոշ բարբառներում ապացոյականացման միտումը համաբանությամբ տարածվել է նաև անցողական բայերի աորիստի ներգործաձև խոնարհման վրա:

Այսպիսով՝ վերը կատարված քննության արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ կերպ: Հայերենում ըեական հիմքով պատճառական բայերի և մի խումբ անկանոն բայերի աորիստի ցոյականացման որոշակի միտում է գործել: Հետևաբար համաբանական-ձևաբանական փոփոխության արդյունքում առաջացած այդ ցոյական տարբերակները երկու դեպքում էլ միանգամայն բնական լեզվական ձևեր են: Մակայն պատճառական բայերի ցոյական ձևերը գրական լեզվում չեն դարձել կանոնիկ մեկ այլ հակադիր միտումի՝ անբարեհունչ արտասանությունից խուսափելու պատճառով: Մինչդեռ որոշ բարբառներում այդ երկու հակադիր միտումների մրցակցային պայքարի հետևանքով հարաբերականորեն կայուն գուգաձևություն է հաստատվել, իսկ այլ բարբառներում տիրապետող է դարձել այդ միտումներից մեկը կամ մյուսը: Ինչ վերաբերում է *ե* լծորդության պարզ բայերի աորիստի նախկին ցոյական ձևերի ապացոյականացման, իսկ անանցողական բայերի դեպքում՝ նաև կրավորաձևացման միտումներին, վերջիններս արդի արևելահայերեն խոսակցական լեզվին են անցել բարբառներից, որտեղ դրանց առաջացման համար պատմականորեն առկա են եղել մասամբ հին հայերենից ժառանգված, մասամբ էլ հայերենի հետագա զարգացման ընթացքում ի հայտ եկած մի շարք նախադրյալներ ու գործոններ:

**Բանալի բառեր** – *համաբանական-ձևաբանական փոփոխություն, պատճառական բայերի ցոյական հիմք, արմատական հիմք, աորիստ, ներգործաձև խոնարհում, կրավորաձև խոնարհում, ապացոյականացման միտում, կրավորաձևացման միտում*

**САРГИС АВЕТЯН** – *Две тенденции аналогических изменений в парадигме аориста современного восточноармянского (синхроническое и диахроническое рассмотрение)*. – Корневой аорист определенных нерегулярных глаголов и *-gn-(tsr)-* аорист каузативных глаголов в историческом развитии восточноармянского проявляли тенденцию замениться *-lig-(ets)-* аористом. Аорист на *-lig-* каузативных глаголов, в отличие от *-lig-* аориста нерегулярных глаголов, не принят как норма в литературном языке. Однако, данные армянских диалектов ясно

показывают, что аористы на *-łg-* как нерегулярных, так и каузативных глаголов обязаны своим существованием одному и тому же аналогическому процессу. Следовательно, отсутствие *-łg-* аориста в современном литературном восточноармянском может быть объяснено другой соперничающей тенденцией – избежать неблагозвучного произношения, вызванного наличием согласного *g(ts)* в двух последующих слогах в основе аориста. С другой стороны, в современном разговорном языке простые глаголы *ł-(e)-* спряжения проявляют тенденцию заменить оригинальный *-łg-* аорист корневым аористом. Кроме того, при непереходных глаголах данное изменение сопровождается заменой активных флексий медиопассивными. Последние два изменения легко объясняются влиянием некоторых диалектов, где оба явления, исторически возникшие в результате ряда аналогических изменений, представляют собой общую морфологическую закономерность.

**Ключевые слова:** *корневой аорист определенных нерегулярных глаголов, -gp- аорист каузативных глаголов, избежать неблагозвучного произношения, аорист на -łg-*

**SARGIS AVETYAN – Two Tendencies of Analogical Changes in the Aorist Paradigm of Modern Eastern Armenian (A synchronic and diachronic examination).** – The root-aorist of certain irregular verbs and the *-gp-(tsr)-* aorist of causatives in Eastern Armenian have historically displayed a tendency to be replaced by the *-łg-(ets)-* aorist. The *-łg-* aorist of causatives, unlike their irregular verbs, is not accepted as standard in the literary language. However, the evidence from Armenian dialects makes it clear that one and the same analogical process is responsible for the existence of the *-łg-* aorists in the case of both causatives and irregular verbs. Therefore, the absence of the *-łg-* aorist of causatives in Literary Modern Eastern Armenian can be accounted for by another competing tendency – to avoid the non-euphonic pronunciation caused by the presence of the consonant *g(ts)* in two successive syllables in the aorist stem. On the other hand, in the modern colloquial language, *ł-(e)-* conjugation simple verbs tend to substitute the root aorist for the original *-łg-* aorist. Besides, in the case of intransitive verbs, the change is accompanied by the replacement of the active inflections with the mediopassive ones. The latter two changes are readily explainable by the influence of some dialects, where both phenomena represent a general morphological pattern, having resulted historically from a number of analogical changes.

**Key Words:** *the root-aorist of certain irregular verbs, the -gp- aorist of causatives, ł- conjugation simple verbs, to avoid the non-euphonic pronunciation, the -łg- aorist*

Ներկայացվել է՝ 09.12.2019

Գրախոսվել է՝ 31.01.2019

Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020